



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱԶՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ. Կաթնաջուր, 13 փող. 1, Հեռ. (099) 000302, katnajur.lori@mta.gov.am

ԿԳԵ-124
20 հունիս 2019թ.


**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան

Կից Ձեզ եմ ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ղեկավարի 2019թ.-ի հունիսի 07-ի թիվ 22 որոշման ճշտված տարբերակը:

Առդիր՝ 1 (մեկ) ֆայլ:

6/20/2019

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՊԱՊՈՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՌԻ ՄԱՐԶ
ԿԱԹՆԱԶՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
 Լոռու մարզի Կաթնաջուր համայնք,
 գ. Կաթնաջուր 13 փողոց, 1 շենք
 հեռ. +374 99-00-03-02

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<07>> <<ՀՈՒՆԻՍ>> 2019 ԹՎԱԿԱՆԻ N 22

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ՀԱՆՁՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՍ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԵԿԵՂԵՑԻՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԻՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24 կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին>> թիվ 731-Ն որոշումամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 18 մայիսի 2006 թվականի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշումամբ հաստատված 3.1 կետի 3-րդ ենթակետով, կարգի 34.1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ թիվ 2387-ն որոշման 29-րդ կետի ա ենթակետով: Հաշվի առնելով, որ կառույցը համապատասխանում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված օրինականացման պայմաններին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1.Օրինականացնել ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 06-052-0070-0003 կադաստրային ծածկագրով 0.04934 հա բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտի իրավունք չառաջացնող, համապատասխան համաձայնագրով Հայաստանյազ առաքելական սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) հանձնվող 196.86քմ արտաքին մակերեսով

Եկեղեցին:

2. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող թիվ 06-052-0070-0003 կադաստրային ծածկագրով 0.04934 հա բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը համարել փոփոխված հատուկ պահպանվող տարածքների հողերի նպատակային նշանակության պատմամշակութային հողերի գործառնական նշանակության:

3. Հողամասի սահմանները որոշվում են «ԳՈՒԳԱՐԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍՊԸ-ի կողմից կազմված և հաստատված 196.86քմ արտաքին մակերեսով եկեղեցու զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0.04934 հա հողամասի հատակագծով:

4. Անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ գ. Կաթնաջուր 11-րդ փողոց թիվ 3 փոստային հասցե:

5. Համայնքի հողային հաշվեկշռում կատարել սույն որոշումից բխող անհրաժեշտ փոփոխություն:

6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր

7. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավար՝



Ա. Պապոյան